ՀԱՆԴԻՊԱԴՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՄԻԱՎՈՐՅԱԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՆԻՐԱՆԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասության[1] մեջ իրար հանդիպադրվում են միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող հատկանիշներ։ Նշանակում է՝ այս նախադասությունը արտահայտում է միևնույն առարկայի կամ առարկաների կողմից կատարվող և հանդիպադրական հակադրության մեջ գտնվող գործողություններ, եղելություններ. ինչպես՝ «Հարցափորձս անում էի արտաքին անտարբերությամբ, իսկ պատասխանները լսում ներքին լափող հետաքրքրությամբ» (ՆԴ, 212)։

Ակնհայտ է, որ միավորյալ նախադասության մեջ գործածվող հանդիպադրական հարաբերությունը տարբերվում է համադասական մյուս նախադասություններում արտահայտվող նույն հարաբերությունից։ Այդ տարբերիչ առանձնահատկություններից նշելի են հատկապես երկուսը.

1. Եթե միավորյալ նախադասության կազմում հանդիպադրվում են միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող տարբեր հատկանիշներ, ապա ոչ-միավորյալ նախադասություններում հակադրվում են տարբեր առարկաներն իրենց ստորոգական տարբեր հատկանիշներով։

2. Ի տարբերություն ոչ-միավորյալ նախադասությունների, միավորյալ նախադասության մեջ հիմնականում բացառվում է ենթակաների միջև գործածվող հանդիպադրությունը։

Այսպես՝ հմմտ. 1. «Մխիթարը զինագործների հետ զրուցում էր մտերմաբար, իսկ Արթինի հետ իշխանավարի էր...» (ՍԽՄՍ, 3, 193)։ 2. «Ես սիրալիր հարգանքով ողջունեցի երկուսին, իսկ հայրս բացատրեց նրանց յուր տարօրինակ հայտարարության պատճառը» (Մ, 2, 90)։

Հանդիպադրական հարաբերությունը միավորյալ նախադասության մեջ շատ հաճախ պայմանավորված է լինում զուգադիր անդամների բառական հականշությամբ, որով շարահյուսական այս կառուցվածքը նաև ստանում է ոճական նշանակություն։

Հանդիպադրական միավորյալ նախադասությունները, ըստ հիմնական բաղադրիչների դրսևորման, լինում են միակազմ և երկազմ, իսկ ըստ բաղադրիչ նախադասությունների քանակի՝ հիմնականում երկանդամ կամ երկեղր։ Հաճախ միավորյալ նախադասության հանդիպադրվող եզրերից մեկը լինում է բարդ։ Չի բացառվում նաև երկու եզրերի բարդ լինելը։ Այսպես, դիտարկենք հետևյալ օրինակները. «Եկողին պատմում էր բոլորը (1), ինչ որ գիտեր (2) [I], իսկ լիմացածը, հարկավ, հնարում էր (3) [II] (ԱՇՔ, 218)։

---

[1] Միավորյալ նախադասությունը կարելի է անվանել նաև ընդհանուր ենթակայով կամ բպմակի ստորոգյալներով բարդ համադասական նախադասություն. մենք պարզապես ենք տերմինի ավանդական գործածությունը։

«Այստեղ ամեն ինչ պարզ է (1) և հասկանալի (2) [II], իսկ տանը՝ բարդ (3), մրին (4) [II] (Ն. տ., 241)։ Միավորյալ նախադասության բաղադրյալ եզրի բաղադրիչ նախադասությունները կարող են ավելի ինքնուրույն լինել՝ արտասանվելով տևական դադարով, որը գրավոր խոսքում արտահայտվում է միջակետով. ինչպես՝ «Գլխավոր ինժենները շատ երկար էր մնում գործարանում, իսկ երբեմն նաև տուն չէր գնում. աշխատում էր վերահսկել բոլոր հերթափոխների աշխատանքը. գիշերվա մեջ մի երկու ժամ կարողանում էր աչք փակել առանձնասենյակի դիվանի վրա» (ՍԳ, 1980, № 2, 65)։ Իսկ բերված օրինակներում ընդգծված կազմիչները առանձին վերցրած բարդ են, այնուհանդերձ, բոլոր նախադասություններն էլ պետք է դիտել իբրև երկանդամ միավորյալ նախադասություններ, որովհետև դրանց անմիջական բաղադրիչ բարդ ստորադասական (1-ին օրինակ) և բարդ համադասական (2-րդ և 3-րդ օրինակներ) նախադասություններից յուրաքանչյուրը կազմում է մեկ ամբողջություն և հակադրվում մյուս եզրին։ Հետևաբար հանդիպադրությունը սովորաբար ենթադրում է զուգադրվող, հակադրվող երկու եզր։ Այստեղից միաժամանակ հետևում է, որ հանդիպադրական միավորյալ նախադասությունն ունի փակ կառուցվածք, որովհետև այն երկանդամ է և բացառում է այլ բաղադրիչի հավելումը։

Հանդիպադրական միավորյալ (և ոչ միայն միավորյալ) նախադասության բաղադրիչները կապակցվում են իսկ, եթե...ապա, ապա, միայն հանդիպադրական շաղկապներով[2] և շարահարությամբ։ Այդ շաղկապներից գործառական առավել մեծ ակտիվություն ունի իսկ-ը, որն արդի հայերենում հանդիպադրական հարաբերության արտահայտման ամենատարածված միջոցն է։ Մյուս շաղկապներն ավելի սակավ են գործածվում այդ նշանակությամբ և հաճախ նաև համատեղում են այլ նրբիմաստներ։

Շարահարական կառուցվածքի հանդիպադրական միավորյալ նախադասություններն իրենց արտահայտած իմաստային փոխհարաբերություններով հիմնականում համապատասխանում են իսկ-ով կապակցված միավորյալ նախադասություններին, ուստի դրանք քննում ենք միասին։

Հանդիպադրական միավորյալ նախադասության կառուցվածքային առանձնահատկություններից մեկն էլ շարադասությամբ այդ հարաբերության ընդգծումն է։ Դա արտահայտվում է երկրորդ բաղադրիչ նախադասության անդամների շարադասության կայունությամբ. հանդիպադրվող անդամը, որպես կանոն, գործածվում է այդ բաղադրիչի սկզբում։

Ինչպես միշտ, միավորյալ նախադասության մեջ ևս հակադրությունը լինում է տարբեր՝ պայմանավորված իր բնույթով ու քերականական ընդգրկմամբ, և ըստ այդմ էլ ունենում է տարբեր դրսևորումներ՝ համասեռ ու անհամասեռ։

---

2 Այս շաղկապների քննությունը տե՛ս Մ. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959, էջ 196—197. Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 130—139. Վ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, հ. Բ, Երևան, 1964, էջ 313—327. Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 449—502. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 293, 296։

Նախքան հակադրության այս տեսակներին անցնելը, բոլոր միավորյալ նախադասության մեջ տարբեր անդամների հակադրվելու յուրահատկությունը, որը էական նշանակություն ունի, որովհետև ամեն մի հակադրություն դառնում է նախադասության կառուցվածքային որևէ յուրահատկության դրսևորման հիմք։ Այդ տեսակետից էլ միավորյալ նախադասության մեջ կարևոր նշանակություն ունեն ստորոգյալների հակադրությունները։

Միավորյալ նախադասության մեջ, բացի ենթակայից, բոլոր անդամները կարող են հակադրվել, միայն թե տարբեր չափով։ Ենթակայի հակադրությունն այստեղ հիմնականում բացառվում է, որովհետև այն ընդհանուր անդամ է և, բնականաբար, հաջորդ բաղադրիչում հակադրության եզր չունի։ Թվում է՝ ենթակաների հակադրության մասնակի դրսևորում պետք է դիտել այն, երբ միավորյալ նախադասության մեջ հանդիպադրվում են ստորոգյալները, իսկ 1-ին բաղադրիչում գործածված ընդհանուր ենթական 2-րդ բաղադրիչում արտահայտվում է իմիր դերանվամբ. ինչպես՝ «Գոլիցինը ինչ-որ մեկին հրամայեց հայերին տեղավորել, իսկ իմիր Դոլգորուկովի հետ մտավ իր խցիկը» (ՍԽՄՍ, 3, 166)։ Սակայն այստեղ ենթակաների լիարժեք հակադրություն չկա. հակադրությունն առկա է միևնույն անձի (Գոլիցին) երկու տարբեր գործողությունների միջև։ Իմիր դերանվամբ արտահայտված ենթական, որ առաջին բաղադրիչում գոյականով արտահայտված նույն ենթական է, ավելի շատ ոճական նշանակություն ունի. այն բաղադրիչ նախադասությունների կապը ավելի սերտ է դարձնում և, որ առավել կարևոր է, շեշտում է այդ բաղադրիչների գործող անձի համընկնումը։ Միևնույն սուբյեկտը ցույց տվող գոյականի ու դերանվան նման գործածությունը, մեր կարծիքով, պետք է դիտել իբրև ենթակայի յուրատիպ կրկնություն։

Հաճախ էլ հանդիպադրված բաղադրիչ նախադասություններից առաջինի գոյական ենթական չի արտահայտվում (բայց համատեքստից հասկացվում է), իսկ իմիր դերանուն ենթական երկրորդ բաղադրիչում արտահայտվում է։ Այս դեպքում դերանվամբ արտահայտված ենթակայի ինքնուրույնությունը մեծանում է, ընդգծվում. այն իր վրա է կրում տրամաբանական շեշտը։ Դրանով պայմանավորված՝ որոշակիորեն զգացվում է իմիր դերանուն ենթակայի ու առաջին բաղադրիչի ենթադրյալ գոյական ենթակայի հակադրությունը. ինչպես՝ «Կրակ է վառել, իսկ իմիր չկա» (ԵՋ, 1, 286)։ Այստեղ, բացի բուն հանդիպադրական հարաբերությունից, առկա է նաև զիջականության որոշ երանգ. երկրորդ բաղադրիչը հակադրվում է առաջինի բովանդակությունից սպասվող հետևանքին։

Ավելացնենք, որ այդ կառուցվածքում ենթական հաճախ հանդիպադրվում է ուղիղ խնդրին՝ ընդգրկելով նախադասության նաև մյուս անդամները. ինչպես՝ «Գնդի սուրհանդակներին ուղարկիր մոտս, իսկ դու զորագունդ հավաքիր իսկույն» (ԴԳվ, 2, 25)։ «Իմիր տիկ է դառել, ուրիշին բերան շինել» (Ա, 95)։

Այսպիսով, ենթակաների միջև գործածվող հանդիպադրական հակադրությունը միավորյալ նախադասությանը բնորոշ չէ։

Միավորյալ նախադասության մյուս անդամները հակադրվում են դրսևորելով իմաստային ու կառուցվածքային յուրահատկություններ։ Այս կառուցվածքում ստորոգյալների հակադրությունն ավելի հաճախադեպ է և շեշտված։ Այդ հակադրությունը կարելի է անվանել ստորոգական հակադրություն։ Սա միավորյալ նախադասության կազմում հանդես եկող ամենահիմ-

նական հակադրությունն է, որովհետև ստորոգյալները (իսկ միակազմ միավորյալ նախադասությունների մեջ՝ բայական գերադաս անդամները) կազմում են միավորյալ նախադասության առանցքը և այդ կառուցվածքում ստանում են բարդ նախադասության բաղադրիչ նախադասությունների գործառություն։ Միավորյալ նախադասության ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները հանդիպադրվում են, երբ խոսողի (կամ հեղինակի) նպատակն է ընդգծել միևնույն առարկային (կամ առարկաներին) ստորոգվող հատկանիշների հակադրությունը։ Ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները, որպես կանոն, միշտ զուգադրվում են իրենց լրացումներով։ Ակնհայտ է, որ պարզ և բաղադրյալ ստորոգյալները դրսևորում են հակադրվելու տարբեր յուրահատկություններ։ Պարզ ստորոգյալների հակադրությունը նման է անվանական բաղադրյալ ստորոգյալների հակադրությանը։ Հմմտ. «Այսօր գնում է. իսկ վաղը կգա»։ «Վարդանը մայրենի լեզվից ուժեղ է, իսկ մաթեմատիկայից՝ թույլ»։

Որոշ յուրահատկությամբ է դրսևորվում միավորյալ նախադասության մեջ բայական բաղադրյալ ստորոգյալների հակադրությունը։ Առաջին բաղադրիչ նախադասության ստորոգյալի եղանակիչ բայը, ընդհանուր լինելով ամբողջ նախադասության համար, երկրորդ բաղադրիչում զեղչվում է՝ չստեղծելով հակադրության եզր, իսկ անորոշ դերբայը երկրորդ բաղադրիչում փոխվում է՝ հակադրվելով առաջին ստորոգյալի անորոշ դերբային։ Այսպիսով, բայական բաղադրյալ ստորոգյալներով կազմված միավորյալ նախադասության մեջ ստորոգական հակադրությունը արտահայտվում է դերբայական ձևերի միջև, ուստի նշված հակադրությունը պետք է դիտել իբրև ստորոգյալների միջև գործածվող մասնակի հակադրություն։ Բերենք օրինակներ. «Վերջը վճռեց աղետավոր իրողության կեսը միայն հայտնել որդուն, իսկ մնացած կեսը պահել ավելի բարեհաջող ժամանակի համար» (ՐՍ, 44)։ «Մտքում դրել է կաթսան հուսմասեցնել արաղ քաշելու, իսկ մնացած երկաթեղենը ծախել» (ԱԲ, 1, 144)։

Երբեմն հակադրությունը հիմնականում կենտրոնանում է ստորոգյալների լրացումների միջև, իսկ լրացյալների հակադրությունը մասամբ թույանում է. ինչպես՝ «Գնել եք վեց ու քառորդով, վաճառել յոր ու քառորդով» (ԱՇՔ, 227)։

Ստորոգյալների հակադրությունը ավելի ուժեղ է լինում, երբ հանդիպադրվում են միևնույն ստորոգյալի դրական ու ժխտական ձևերը, որով հակադրությունը վերածվում է ժխտման, բացասման։ Այս դեպքում միավորյալ նախադասությունը արտահայտում է մի պարագայում միևնույն առարկային կամ առարկաներին ստորոգվող տվյալ հատկանիշի հաստատումը, իսկ մի այլ պարագայում՝ դրա ժխտումը, բացասումը։ Կրկնությունից խուսափելու համար երկրորդ բաղադրիչի ժխտական ստորոգյալը սովորաբար զեղչվում է, և նրա փոխարեն գործածվում է ոչ ժխտական եղանակավորող բառը։ Ստորոգյալի զեղչումը գրավոր խոսքում, ինչպես միշտ, արտահայտվում է բութով. օրինակ՝ «նա դպրոցում համեստ է, իսկ տանը՝ ոչ» (=համեստ չէ)։

Երբեմն գործողությունը շեշտելու նպատակով ստորոգյալը երկրորդ բաղադրիչում կրկնվում է (իհարկե, ժխտական ձևով). ինչպես՝ «Դու ինձ պատմել ես, իսկ Գուրգենին չես պատմել»։

Միավորյալ նախադասության ստորոգական հակադրությունը վերանում է, չեզոքանում, երբ նրա բաղադրիչներն ունենում են մի ընդհանուր բայ-ստորոգյալ կամ բայական գերադաս անդամ։ Այս դեպքում հակադրվում են միայն երկրորդական անդամները։ Այսպիսի միավորյալ նախադասության կառուցվածքային ամենաբնորոշ առանձնահատկություններից մեկը երկրորդ բաղադրիչում ստորոգյալի կամ բայական գերադաս անդամի զեղչումն է, թեև չի բացառվում նաև գործողությունը ընդգծելու նպատակով ժողովրդախոսակցական լեզվում դրա կրկնությունը. ինչպես՝ «Աղջկա գեշը չտեսանք, հարսի՝ լավը» (Ա, 271)։ «Առաջ կրկնիս ձեռնաբաց, վերջը կրկնիս գրկախաբաց» (Ն. տ., 50)։ «...հունվարի ասածից հրաժարվում է փետրվարին, մի տարի հառաջ գրած բանից հրաժարվում է ներկայումս» (ՄՆԵՏ, 47)։

Դիմավոր միակազմ միավորյալ նախադասության ընդհանուր բայական գերադաս անդամը համախ զեղչվում է ընդհանրապես, բայց մտքից հասկացվում է։ Այսպես, «Հասկացողին՝ մին, չհասկացողին՝ հազար ու մին» հանրահայտ ասացվածքի մեջ երկու բաղադրիչներում զեղչված է ասա բայական անդամը։

Արդ՝ քննենք միավորյալ նախադասության մեջ գործածվող հակադրության վերոդրյալ տեսակները։ Ամենից առաջ պետք է տարբերել համասեռ և անհամասեռ հակադրությունները։ Համասեռ կարելի է անվանել այն հակադրությունը, որն արտահայտվում է միավորյալ նախադասության երկու բաղադրիչների միևնույն անդամների միջև։ Այսպիսի հակադրությամբ կարող են հանդիպադրվել միավորյալ նախադասության բոլոր անդամները։ Համասեռ հակադրությունն էլ միատարր չէ՝ պայմանավորված միավորյալ նախադասության մեջ իր ընդգրկմամբ։ Ընդհանուր առմամբ միավորյալ նախադասության մեջ համասեռ հակադրությունը մասնակի է, որովհետև նրա ենթական, ինչպես նշեցինք, դուրս է մնում հակադրության ոլորտից։ Լրիվ հակադրություն դրսևորելու հնարավորության բացառումը միավորյալ նախադասության հիմնական յուրահատկություններից մեկն է։ Ավելի հաճախ միավորյալ նախադասության բաղադրիչները հակադրվում են իրենց բոլոր նույն անդամներով, ամբողջությամբ։ Այս դեպքում հակադրությունը տարածվում է հանդիպադրված բաղադրիչ նախադասություններում զուգահեռ գործածված բոլոր անդամների վրա։ Այսպիսի հակադրությունը, այնուամենայնիվ, հիմնականում ունի ստորոգական բնույթ, որովհետև տվյալ դեպքում ամենից առաջ հակադրվում են ստորոգյալները կամ բայական գերադաս անդամները իրենց լրացումներով։ Այնուհանդերձ համասեռ հակադրությունը ներառում է նաև լրացումներ։ Հանդիպադրված բաղադրիչների միջև առաջանում է իմաստային ու բառաքերականական զուգահեռություն. առաջին բաղադրիչ նախադասության անդամները հաջորդ բաղադրիչում ունենում են իրենց հանդիպադրված զուգահեռ ձևերը։ Հետևաբար, ամբողջ նախադասությունը կառուցվում է իր բոլոր անդամների հակադրության սկզբունքով։ Բացի այդ, զուգադիր բաղադրիչ նախադասությունների շարադասությունը և ստորոգյալների կամ գերադաս անդամների քերականական արտահայտությունը հիմնականում նման են լինում իրար։ Ժամանակակից հայերենի միակազմ և երկկազմ կառուցվածքի միավորյալ նախադասություններում հա-

մասեռ հակադրությունն արտահայտվում է հետևյալ կաղապարներով, որոնցով, իհարկե, չի սահմանափակվում[3].

ա) ՈՒԽ+Ստ կամ ԲԳԱ←→ՈՒԽ+Ստ կամ ԲԳԱ. ինչպես՝ «Նա հեքիաթը պատմեց, իսկ «ես իմ անուշ Հայաստանի»-ն երգեց»։ «Խենթինը ուտենք, խելոքինը պահենք» (Ա, 180)։

բ) Ո+Ստ+Համ←→Համ+Ո+Ստ. ինչպես՝ «Փրփրած գետակ էիր ճահիճների կողքին, խոր ձորերի կողքին մի պարզ լճակ էիր» (ՀՍՍԲ, 243)։

գ) Ստ+ՍԽ←→ՍԽ+Ստ. ինչպես՝ «Նա անգութ էր կռվում, գոտեմարտում՝ դաժան» (ՊՍ, 1, 13)։

դ) Ստ+ԺՊ←→ԺՊ+Ստ. ինչպես՝ «Կատու էր դառել այն ժամանակ, իսկ հիմա... հոխորտում է» (ՍԽՄՍ, 3, 179)։

ե) ԺՊ+ՈՒԽ+ԲԳԱ←→ԺՊ+ՈՒԽ+ԲԳԱ. ինչպես՝ «Գիշերը մարդ կմորթե, ցերեկը ճամփա կը հարդե» (Ա, 30)։

զ) ՏՊ+ԲԳԱ կամ ԱԳԱ←→ՏՊ+ԲԳԱ կամ ԱԳԱ. ինչպես՝ «Դուրսը քահանա, ներսը սատանա» (Ա, 30)։

է) ՄՊ+ԱԳԱ←→ՄՊ+ԱԳԱ. ինչպես՝ «Ինձ հետ խոով է, շվաքիս հետ՝ հաշտ» (առած)։

ը) ՄԽ+Ստ←→ՄԽ+Ստ. ինչպես՝ «Նա սրիչով սրում է, իսկ մատիտով՝ գրում»։

թ) ՄՊ+Ստ կամ ԲԳԱ←→ՄՊ+Ստ կամ ԲԳԱ. ինչպես՝ «Իմաստունի հետ քար քաշի, անգետի հետ փլավ մի ուտի» (Ա, 58)։

ժ) ԺՊ+ԲԳԱ←→ԺՊ+ԲԳԱ, ինչպես՝ «Առաջ միտք արա, հետո գործ սկսի» (Ա, 6) և այլն։

Միավորյալ նախադասության մեջ երբեմն էլ հակադրվում են բաղադրիչ նախադասությունների ոչ բոլոր անդամները։ Հմմտ. «Երեկ գնացի, իսկ այսօր վերադարձա»։ «Երեկ գնացի Երևան, իսկ այսօր շտապ վերադարձա»։ Առաջին օրինակում հակադրված են ստորոգյալներն իրենց ժամանակի պարագաներով, իսկ երկրորդ նախադասության մեջ հակադրությունը նույն անդամների միջև պահպանվում է, բայց նրա ծիրից դուրս են տեղի (Երևան) և ձևի (շտապ) պարագաները։

Միավորյալ նախադասության մեջ հանդիպադրված բաղադրիչներից մեկը մյուսից կարող է տարբերվել նաև գոյականական անդամի լրացումով, ինչպես՝ «Անուշը դասարանում նկարեց ծաղիկ, իսկ տանը գրեց մի գողտրիկ բանաստեղծություն»։

---

3 Այստեղ և այսուհետև ամեն մի կաղապարի անդամ ներկայացվում է իր շարադասությամբ համապատասխան։ Տեղի խնայողության պահանջով կաղապարի անդամները ներկայացնում ենք համառոտագրությամբ. Ստ—ստորոգյալ, ԲԳԱ—բայական գերադաս անդամ, ԱԳԱ—անվանական գերադաս անդամ, Ո—որոշիչ, Հ—Հատկացուցիչ, Բ—բացահայտիչ, ՈՒԽ—ուղիղ խնդիր, ՄԽ—միջոցի խնդիր, ԱԽ—անդրատման խնդիր, Համ—համեմատության խնդիր, ՍԽ—սահմանափակման խնդիր, ՎԽ—վերաբերության խնդիր, ՀԽ—հանդման խնդիր, Մատ—մատուցման խնդիր, ՏՊ—տեղի պարագա, ԺՊ—ժամանակի պարագա, ՁՊ—ձևի պարագա, ՉՊ—չափի պարագա, ՆՊ—նպատակի պարագա, ՄՊ—միասնության պարագա և այլն։

Համասեռ հակադրությունը գործածվում է նաև ընդհանուր ստորոգյալով կամ բայական գերադաս անդամով միավորյալ նախադասության մեջ։ Այս դեպքում ստորոգյալը կամ բայական գերադաս անդամը երկրորդ բաղադրիչում զեղչվում է, և հակադրությունն արտահայտվում է երկրորդական անդամների միջև։ Նման համասեռ հակադրություն ստեղծում են հետևյալ քերականական միավորների կառուցվածքները.

ա) ՈՒԽ+ՏՊ←→ՈՒԽ+ՏՊ. ինչպես՝ «Մի թեր դրել է հեռադիտակին, իսկ մյուսը՝ «Արաբոյի» վրա»[4] (ՍԴ, 1976, № 8, 29)։

բ) Ո+ՈՒԽ+ՏՊ←→Ո+ՈՒԽ+ՏՊ. ինչպես՝ «Վիթխարի գլուխը տարածել է դեպի արևելք, իսկ ստվար գավակը՝ դեպի արևմուտք» (ՐՍ, 229)։

գ) Հ+ՏՊ←→Հ+ՏՊ. ինչպես՝ «Կծողի հետևին կանգնիր, քացի տվողի՝ առաջին» (Ա, 7)։

դ) ՈՒԽ+ԶՊ←→ՈՒԽ+ԶՊ. ինչպես՝ «Տղին զույգ ձեռով են պահել, աղջկան՝ մեկ» (Ա, 329)։

ե) ՈՒԽ+ՄԽ←→ՈՒԽ+ՄԽ. ինչպես՝ «Նամակը մատիտով ես գրել, բանաստեղծությունը՝ գրչով»։

զ) Հ+ՈՒԽ←→Հ+ՈՒԽ. ինչպես՝ «Ելնողի տեղը կառնին, մեռնողի՝ կնիկը» (Ա, 317)։

է) Ո+ՏՊ+ԶՊ←→Ո+ՏՊ+ԶՊ. ինչպես՝ «Առաջին նախադասության մեջ մասնական բացահայտիչը նախադաս է կիրառվել, վերջին օրինակում՝ ետադաս» (ԺՀԼ, 3, 218)։

ը) ՈՒԽ+ՄԱԽ←→ՈՒԽ+ՄԱԽ. ինչպես՝ «Նա գիրքը հանձնեց ինձ, իսկ տետրը՝ Վարդանին» և այլն։

Միավորյալ նախադասության կազմում համասեռ հակադրությունից տարբերվում է **բերականական անհամասեռ հակադրությունը**։ Սա այն հակադրությունն է, որն արտահայտվում է միավորյալ նախադասության բաղադրիչների տարբեր անդամների, կամ էլ տարբեր կառուցվածք ունեցող բաղադրիչ նախադասությունների միջև։ Հետևաբար, անհամասեռ հակադրությունն արտահայտվում է.

ա) Երբ միավորյալ նախադասության բաղադրիչներից մեկը համառոտ է, մյուսը՝ ընդարձակ, կամ երբ մեկը պարզ է, մյուսը՝ բարդ։ Սա առկա է մասնավորապես այն դեպքում, երբ «տրամաբանական երկու հակադիր երևույթներն արտահայտվում են բառաքերականական անհավասար միջոցներով»։ Օրինակ՝ «Նա ցերեկը եկել էր հոր մոտ և չէր վերադարձել, իսկ այժմ քնել էր բակի մի անկյունում՝ շոր խոտերի վրա...» (ՍՀՀԲ, 366)։

բ) Երբ գործածվում է միավորյալ նախադասության բաղադրիչների տարբեր անդամների միջև։ Ընդսմին, մասնավորապես հանդիպում են անհամասեռ հակադրության հետևյալ կառուցվածքները.

---

[4] Այս նախադասության ուղիղ խնդիրների հակադրությունը հիմնականում պայմանավորված է տեղի պարագաների հակադրությամբ։

[5] Ս. Դ. Աբրահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976, էջ 585։

ա) ՏՊ+Ստ+ԺՊ←→ԺՊ+Ստ+ՄՊ. ինչպես՝ «Քաղաք էր գնացել դեռ պատանի..... իսկ այժմ վերադառնում էր կնոջ ու աղջկա հետ» (ԱԲ, 1, 97)։

բ) ԺՊ+Ստ+ՈՒԽ+ԱԽ←→ԺՊ+Բ+ՈՒԽ+Ստ. ինչպես՝ «Ամառը նա դեռ կհամաձայներ «մի բան էլ դրամագլխից բաշխել», իսկ այժմ, Միքայելի վարմունքից հետո, տոկոսի տոկոսն էլ կառնի» (ԱՇՔ, 327)։

գ) ՉՊ+Ստ+Հ+ՈՒԽ←→ՈՒԽ+ԺՊ+ՉՊ+Ստ. օրինակ՝ «Անչափ սիրում էի Բաֆֆիի գրվածքները, ընդհակառակն, Սերենցը և Պուշյանը միշտ ձանձրույթով եմ կարդացել» (ՆԴ, 9)։

դ) ԺՊ+Ստ←→ԺՊ+Ստ+ՈՒԽ. ինչպես՝ «Մանուշակը ցերեկը աշխատում է, իսկ երեկոյան օգնում մորը»։

ե) Ստ+ՈՒԽ←→ՏՊ+ԺՊ+Ստ+ՈՒԽ. ինչպես՝ «Սիրում եմ բնությունը, իսկ բնության մեջ միշտ որոնում եմ գեղեցիկը» և այլն։

Միավորյալ նախադասության մեջ հակադրության ուժեղ լինելը, զուգադիր անդամների բառական հականշությունից բացի, պայմանավորված է լինում նաև այլ հանգամանքներով։ Հակադրությունը խիստ ուժեղ է լինում, երբ հանդիպադրված երկրորդ բաղադրիչ մասում գործածվում է ընդհակառակն բառը. ինչպես՝ «Գուրգենը անցյալ տարի հետադիմում էր, իսկ այս տարի, ընդհակառակն, ուսման առաջավոր էր»։ Ակնբախ է, որ հանդիպադրական միավորյալ նախադասության բաղադրիչների կապն ավելի է ուժեղանում նախադասության սկզբում որևէ երկրորդական անդամ ընդհանուր անդամի գործառույթով գործածվելու դեպքում։ Իբրև այդպիսին հիմնականում հանդես են գալիս տեղի և ժամանակի պարագաները, որոնք տվյալ դեպքում, բաղադրիչ նախադասությունների կապը շեշտելուց բացի, ընդգծում են զուգադրության՝ տարածական կամ «ժամանակային նույն պլանով կատարվելը»[6]. ինչպես՝ «Երկու ամսում կոլտնտեսականները ավարտեցին բերքահավաքի աշխատանքները, իսկ անասնակերի հավաքման բնագավառում զգալի հաջողություններ չունեցան»։

Իսկ շաղկապով ու շարահարությամբ կապակցված հանդիպադրական միավորյալ նախադասություններից որոշակիորեն տարբերվում են նույն հարաբերությունն արտահայտող այն միավորյալ նախադասությունները, որոնցում կապակցման բառական միջոցի գործառույթով հանդես են գալիս եթե... ապա, ապա, միայն շաղկապները։

Եթե... ապա զուգադրական շաղկապը հանդիպադրական հարաբերություն արտահայտելու իր նշանակությամբ սահմանափակ կիրառություն ունի միավորյալ նախադասության մեջ, ուր նա կորցնում է իր՝ պայմանի հարաբերության[7] իմաստը՝ դրսևորելով միևնույն առարկային կամ առարկաներին վերագրվող հատկանիշների հակադրական բնույթի զուգադրություն։ Այս զուգադրական շաղկապի հանդիպադրական հարաբերության իմաստը մոտ է իսկ շաղկապի

---

[6] Ն. Պառնասյան. Անշաղկապ բարդ նախադասությունները ժամանակակից հայերենում («Լեզվի և ոճի հարցեր», հ. 2, Երևան, 1964, էջ 52)։

[7] Պայմանի հարաբերություն արտահայտելու դեպքում նախադասությունը դիտվում է պայմանի պարագա երկրորդական նախադասությամբ կապակցություն։

իմաստին, միայն այն տարբերությամբ, որ եթե... ապա-ն ունի ավելի սահմանափակ գործածություն։ Այդ շաղկապի բաղադրիչներից ամեն մեկը գործածվում է հանդիպադրված բաղադրիչներից յուրաքանչյուրի սկզբում՝ կապակցվող միավորների կապը դարձնելով ավելի սերտ։ Զուգադրված անդամներն էլ անմիջապես հաջորդում են եթե և ապա շաղկապական բաղադրիչներին. ինչպես՝ «Եթե նա կենցաղային հարցերում թերանում է, ապա հասարակական աշխատանքներում առաջավոր է»։

Ապա շաղկապը իր հակադրության իմաստով մոտ է իսկ-ին, այն տարբերությամբ, որ գործածվում է հարցական երանգի միավորյալ նախադասություններում. դեռ որում, երկրորդ բաղադրիչ նախադասության հարցում արտահայտող բառը հաջորդում է շաղկապին, իսկ առաջին բաղադրիչի զուգադիր անդամին ավելանում է ոչ թարմատարը. ինչպես՝ «Վարդանը նրան որ չի սիրում, ապա ո՞ւմ է սիրում»։ «Քեզ որ չպատմեմ, ապա ո՞ւմ պիտի հայտնեմ»։

Հանդիպադրական հարաբերությունը միավորյալ նախադասության մեջ սակավադեպ արտահայտվում է նաև միայն շաղկապական բառով։ Այս դեպքում հակադրությունը թույլ է արտահայտվում, և հանդիպադրվող երկրորդ բաղադրիչ նախադասությունը առաջին բաղադրիչին «մի հակադրություն ավելացնելով՝ շափավորում կամ սահմանափակում է նրա բովանդակությունը և նրանից սպասած հետևության առաջ առնում»[8]. ինչպես՝ «Մենք ողջ և առողջ ենք, միայն քո առողջությունն ենք ուզում» (ՀՔ, 247)։

Հաճախ հանդիպադրական հարաբերությամբ միավորյալ նախադասության բաղադրիչների կապակցմանը նպաստում են նաև բառաքերականական որոշ միջոցներ՝ մի կողմից... մյուս կողմից, երբեմն... երբեմն, մեկ... մեկ, մերթ... մերթ և այլ զուգադրական կապակցություններ, որոնց բաղադրիչները գործածվում են զուգադրվող եզրերի սկզբում՝ ավելի սերտ դարձնելով կապակցվող միավորների կապը։ Այս կարգի միավորյալ նախադասությունները կարող են կապակցվել իսկ շաղկապով և շարահարությամբ. ինչպես՝ «Զիավորները անընկյուղ հարձակմամբ գրոհ տվին պատնեշի վրա, սկսեցին մի կողմից քանդել, մյուս կողմից կռվել» (ՐՍ, 544)։ «Մերթ հրում է նա, մերթ խտուտ բերում ինձ նման հլու-հնազանդ պտին» (ՊՍ, 1, 124)։ «Դու մեկին խրախուսում ես, իսկ մյուսին հանդիմանում»։

Երբեմն... երբեմն, մեկ... մեկ, մերթ... մերթ զուգադրական կառուցվածքներով կազմված միավորյալ նախադասության բաղադրիչների հակադրությունը համեմատաբար թույլ է։ Այդ բաղադրիչները կապվում են նաև ոչ կանոնավոր տարժամանակության հարաբերությամբ. «Խեղանդամը երբեմն քրքջում էր տարօրինակ, բարձրաձայն, երբեմն լաց լինում» (ՍԽՄՍ, 3, 197)։ «Մեկ մղվեց հարցնել Վարազդուխտին, թե ո՞վ է փրկել Բաբիկին, մեկ էլ չուզեց իր պատվին այդ հարցմունքով մտերմություն մտցնել իր և իր ամուսնու տարփածուի մեջ» (ԴԴՎ, 2, 447)։

Այս կառուցվածքի նախադասությունները շարահարական լինելու դեպքում մասամբ մոտենում են միավորական հարաբերությամբ տարբերակին, սակայն իրականում ներհակական են։ Դրանում համոզվելու համար քննենք

---

8 Մ. Արեգյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 667։

նշված նախադասություններից առաջինը, ուր միևնույն անձին վերագրված են տարբեր, հակադիր հատկանիշներ (քրջջալ—լաց լինել), որոնք, իբրև հակադիր գործողություններ, կարող են միմիայն հանդիպադրվել։ Ներհակության ձևավորմանը նպաստում է նաև յուրաքանչյուր բաղադրիչում գործածված երբեմն մակբայը։ Այդ նախադասությունը շաղկապավոր կառուցվածքի փոխարկվելու դեպքում ներհակությունն ավելի որոշակի կարտահայտվի. ինչպես՝ «Խեզանդամը երբեմն քրջջում էր տարօրինակ, բարձրաձայն, իսկ երբեմն լաց լինում»։

Երբեմն... երբեմն, մեկ... մեկ, մերթ... մերթ զուգադիր կապակցությունների բաղադրիչները երկուսից ավել կրկնվելու դեպքում հակադրությունը թուլանում է և հակվում դեպի պարզ թվարկումը. օրինակ՝ «Անտառապահի որսկան շունը մեկ նայում էր տիրոջը, մեկ Դիլան դայլան, մռռում էր, պոչը գետնով տալիս, մեկ բերանը բաց՝ հուզմունքից հորանջում, մեկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ թփրտում էր միրհավը» (ԱԲ, 1, 80)։

Միավորյալ նախադասության մեջ հանդիպադրական հակադրությանը հաճախ զուգակցում են այլ հարաբերություններ՝ ժամանակային, պատճառահետևանքային, զիջական և այլն։ Ավելին. նույնիսկ նույն նախադասության մեջ կարող են արտահայտվել երկուսից ավելի հարաբերություններ։ Այսպես, օրինակ, «Վարդանը սկզբում դժգոհում էր, իսկ այսօր զղջում է իր արարքի համար» կառուցվածքում հակադրությանը զուգորդել է ժամանակային հաջորդականության հարաբերությունը։ Հանդիպադրական միավորյալ նախադասության մեջ ժամանակային հարաբերությունն ավելի ակնառու է արտահայտվում, երբ հանդիպադրվում են բաղադրիչ նախադասությունների ստորոգյալները կամ բայական գերադաս անդամներն իրենց ժամանակի պարագաներով։ Նման կառուցվածքում ավելի հաճախադեպ են ժամանակային հաջորդականությունը և ժամանակի պարագայի գործառույթ ունեցող բառերի յուրատիպ զուգորդումները՝ առաջ... հետո, այսօր... վաղը, երեկ... այսօր և այլն, ինչպես՝ «Այսօր (նրանք) սպանում են իշխան ու նախարար, վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա» (ՍՁՀԲ, 290)։ «Մարդը մի շաբաթ առաջ նրա անունը լսելիս դեմքը թթվեցնում էր, հիմա հոգին չի տալիս շտեսած» (ԱՇՔ, 7)։ Շարահարական այս նախադասությունները կարելի է ըմբռնել նաև իբրև միավորական հարաբերությամբ նախադասություններ[9] (հենց ժամանակային հարաբերությունը պայմանավորված է գրանցում որոշակիորեն առկա միավորական հարաբերությամբ), սակայն իշխողը հանդիպադրական հակադրությունն է (հմմտ. «Այսօր (նրանք) սպանում են իշխան ու նախարար և վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա» և՝ «Այսօր (նրանք) սպանում են իշխան ու նախարար, իսկ վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա» և այլն)։

Միավորյալ նախադասության բաղադրիչների քերականական հարաբերության ըմբռնման նման երկակիությունը պայմանավորված է շարահարական կապակցության՝ բարդ համադասական նախադասության բաղադրիչների հարաբերություններն ավելի պակաս որոշակիությամբ դրսևորելու հանգա-

---

[9] Առաջին օրինակում առկա է նաև պայմանի հարաբերություն (հմմտ. «Եթե այսօր (նրանք) սպանում են իշխան ու նախարար, ապա վաղը սուր կբարձրացնեն ինձ վրա, քեզ վրա»)։

մանրով, ինչպես նաև միևնույն նախադասության մեջ տարբեր հարաբերությունների զուգակցմամբ։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա—Ա. Ղանալանյան, Հայկական առածանի, Երևան, 1960։
ԱԲ—Ա. Բակունց, Երկեր, հ. 1, Երևան, 1975։
ԱՇԳ—Ա. Շիրվանզադե, Քառս, Երևան, 1976։
ԴԴՎ—Դ. Դեմիրճյան, Վարդանանք, հ. 2. Երևան, 1968
ԼՁ—Ն. Ջարենց, Երկեր, հ. 1, Երևան, 1962։
ԺՀԼ—Ս. Գ. Արբահամյան, Ն. Ա. Պառնասյան, Հ. Ա. Օհանյան, Ե. Ֆ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, Երևան, 1976։
ՄՊ—«Սովետական գրականություն» (ամսագիր)։
ՀԲ—Հով. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1978։
ՀՍՍԲ—Հ. Սա[illegible]յան, Սեզամ, բացվիր, Երևան, 1967։
Մ—Մուրացան, Երկեր, հ. 2, Երևան, 1951։
ՄՆԵՏ—Մ. Նալբանդյան, Երկու տոզ, Երևան, 1954։
ՆԴ—Նար-Դոս, Երկեր, Երևան, 1977։
ՊՍ—Պ. Սևակ, Երկեր, հ. 1, Երևան, 1972։
ՍՋՀԲ—Ստ. Զորյան, Հայոց բերդը, Երկեր, հ. 6, Երևան, 1962։
ՍԽՄՍ—Ս. Խանզադյան, Մխիթար ապարապետ, Երկեր, հ. 3, Երևան, 1968։
ՐՍ—Բաֆֆի, Սամվել, Երկեր, հ. 7, Երևան, 1956։
Ն. տ.—Նույն տեղում։

ПРЕДЛОЖЕНИЕ С ОДНОРОДНЫМИ СКАЗУЕМЫМИ С СОПОСТАВИТЕЛЬНЫМ ОТНОШЕНИЕМ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АНДРАНИК КАРАПЕТЯН

Резюме

В предложении с однородными сказуемыми с сопоставительным отношением противопоставляются различные признаки предмета или предметов. Сопоставительные отношения предложений с однородными сказуемыми отличны от сопоставительных отношений других сложносочиненных предложений.

Названные предложения в зависимости от наличия составляющих могут быть односоставными и двусоставными, а по количеству составляющих предложений—в основном двучленными. Составляющие этого предложения связываются с помощью союзов *а* (*իսկ*), *если...то* (*եթե...ապա*), *затем* (*ապա*), *лишь* (*միայն*) и бессоюзным сочинением. Кроме подлежащего все члены исследуемых предложений противопоставляются друг другу, но в разной степени. Характер противопоставлений различен в зависимости от сущности и грамматического охвата, вследствие чего они имеют разные проявления: однородное, неоднородное, выражающиеся различными моделями и обусловливающие специфические и смысловые особенности предложения с однородными сказуемыми.